

1652-ի վկայաթուղթի մը մէջ Խօջայ Կարապետի մը հետ, որ դուրէ նոյնը ըլլայ «Կարապինիէր» կոչուածին հետ: 1657-ին կը յիշուին դարձեալ հում մատաքսի հայ վաճառականներ Գէորգ եւ Մատթէոս, որոնց հետ ուրիշ թուղթի մը մէջ կը յիշուի նաեւ Եարիզ, իսկ տեղ մ'ալ Մատթէոսի հետ Խօջայ Կուրկի մը, նոյնպէս հայ մետաքսի վաճառական: Բնական է, որ ասոնք միայն յիշուածները են:

Ինչպէս արդէն ըսի, ԺԶ. դարէն առաջ Անգլիա իր մետաքսը կը ստանար Վենետիկցիներէն: ԺԶ. դարէն վերջ ան սկսաւ Ռուսիոյ վրայով ստանալու փորձը: ԺԷ. դարուն սկիզբը Անգլիացի վաճառականներ նոյնիսկ Կ. Պոլիս հայ վաճառականներէ կը դնէին իրենց հում մետաքսը, ինչպէս նաեւ զորդը: Անշուշտ (իփակճոց ասնաֆը», որ դեռ 1766 թուին Կ. Պոլիս կը յիշուի) փառաւոր անցեալ մը ունեցած ըլլալու է, որ, զժրախտարար, մութ կը մնայ այժմ, ինչպէս որ մութ կը մնայ Իզմիրի հայոց վաճառականութեան պատմութիւնը, որ այնքան կարեւոր դեր խաղացած է Անգլիոյ եւ Հոլանդոյ մետաքս եւ արեւելեան ուրիշ ապրանքներ հայթայթելու գործին մէջ:

Վենետիկի դիւանաթուղթերուն մէջ կան վկայութիւններ, ըստ որոնց «Յովհ. Եաւրի (որ ինձի Մարտէյլ յիշուող Եաւրիզը կը յիշեցնէ, 1652-ին: Յ. Բ.) Ի Վենետիոյ առաքեալ էր 24 հակ մետաքսի ի Goub(6) քաղաք Հոլլանդայ եւ այլք նոյնպէս առաքեն մետաքս եւ ստե»::

Այս ատենները Առաքել ծերունի մետաքսավաճառ մը, «որ ամի ամի հանեալ ի Կիւսնայ բերէր մետաքս հինգ միլիոն արժէից, տանէր յԱմսդերտամայ ի Սպահան աղզ աղզ աղիւմաղիսի, յորս ի դէպ է դառաջին տեղին ունել չուխայից»:

«Վաղուց իսկ ձգեալ էր Հոլլանդացոց առինքեանս դմետաքսարեր Հայս, յորժամ (1633)

5) Էջմիածին վասն «աղքատաց եւ կարօտելոց» երկու փնտխ ոսկի կը շրկէին:

6) Սարուխանի համաձայն՝ դուրէ ըլլայ Zwolle Հոլլանդական նաւահանգիստը:

ուչ յաջողեցաւ դքսին Հոլլանդայնի համոզկեր լինել մեծ դքսին Մոսկովաց՝ թոյլ տալ մետաքսարեւացն դալ ի դաստակերտն իւր Ֆրէտէրիկչատտ»:7)

1725-ին Լէօպոլդ եւ Պարսկահայոց միջեւ համաձայնութիւն կը կնքուի՝ տարեկան երկու կարաւանով արեւելեան զանազան ապրանքներ Լէօպոլդ բերելու համար, որոնց մէջ մետաքս եւ մետաքսեղէն մեծ տեղ կը բռնէին: Հայերը մետաքս կը բերէին Պուքովինա, Ռուսիա, Լեհաստան, Հունգարիա: Նոյնիսկ Ռւքրանիոյ Քիէյվ քաղաքը հայ վաճառականներու հանգրուան էր ԺԸ. դարուն:1)

Սիստ հետաքրքրական է, որ Մարսիլիոյ եւ Ամսդերտամի մէջ կը տպուէին առաջին հայ վաճառականական հրատարակութիւնները, որոնք, որքան որ դիտեմ, հնազոյն ԱՇ-ԽԱՐ ՀԱՅԱՐԻ հայերէն հրատարակութիւններն են:

Իմ հաւաքածոյիս մէջ փոքրածալ թանկագին հատորիկ մը ունիմ սա խորագրով՝ «Արհեստ համարողութեան: Ամբողջ եւ Կատարեալ: Թարգմանեցեալ ի պէտս Հայկադունեաց եւ մանաւանդ վաճառականաց: Եւ տպագրեցեալ ի տպարանի սրբոյ Էջմիածնի եւ սրբոյն Սարգսի զօրավարին: Ի հայրապետութեան տ(եառ)ն Յակօբայ ամենից հայոց Կաթողիկոսի եւ ի միապետութեան Լուսովիկոսի չորեքտասներորդի արքային Կալլիացոց: Ի ՄԱՐՁԻԼԵԱՅ Յամի ներ մարդեղութեան Տ(եառ)ն 1675. Օգոստոսի ամսոյ 25: Ի. Յ. Հ. Բ. Տ. Պ.»:

Ինչպէս ըսի, ասիկա հնազոյն հայերէն աշխարհաբառ հրատարակութիւնն է, ինչպէս որ երկրորդ խորագիրն ալ կը վկայէ, «Սկզբունք համարողական արհեստի աշխարհականորէն շարագրեցեալք»: Եւ ասկէ հոս կուտամ նմոյշ մը.—

«Մին մարդ մի կ'ուզէ հոռեմաստան ապրըլում ծախէ. ապրըլումին դարով կու պարչին եւ զանթարով կու քաչեն, մին զիտրն երկու

7) (Սիսական», էջ 459:
1) Collection of Voyages and Travels.— J. Harris, Vol. II, p. 1033: